«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ երաժշտություն

Մասնակից՝ Հարությունյան Ռուզան

Ղեկավար՝ Խրիմյան Հռիփսիմե

Թեմա՝ Արտադասարանական միջոցառումների դերը սովորողների արժեքային համակարգի և գեղագիտական ճաշակի զարգացման գործում

2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1 5
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ և ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 5
1 . 1 Մանկավարժության օբյեկտը 5
1.2. Գեղագիտական դաստիարակություն 7
ԳԼՈՒԽ 2 10
ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ և ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ «ՎԱՆԵՑՈՑ ՀԱՐՍԱՆԻՔ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ 10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14
ՀԱՎԵԼՎԱԾ 1 15
ՀԱՎԵԼՎԱԾ 2 16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտադասարանական միջոցառումները հիանալի հնարավորություններ են ընձեռնում դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման, նրանց անկախ մտածողության և նախաձեռնողականության ձևավորման համար: Եթե աշակերտին հասանելի է լինում տվյալ միջոցառման նպատակը և հասկանալի՝ իր անելիքը, ապա վերջինս գեղագիտական հաճույք է ստանում, տվյալ միջոցառմանը մասնակցելով՝ ոգևորվում է և իր հնարավորությունների սահմաններում փորձում է ինքնահաստատվել: Միջոցառումը պետք է համապատասխանի աշակերտի զգացմունքներին, ապրումներին, ինչը դառնում է դպրոցականի բազմակողմանի զարգացման և դաստիարակության միջոց: Աշակերտը դառնում է միջոցառման առաջատարն ու պատասխանատուն: Վերոնշյալ նպատակների իրականացմանն էր ուղղված մեր կողմից կազմակերպված «Վանեցոց հարսանիքը» միջոցառումը: Իսկ ինչպե՞ս ծնվեց միջոցառման կազմակերպման գաղափարը: Սովորաբար դաստիարակչական աշխատանքի թեման քննարկվում է դասղեկի ժամերին: Քննարկում էինք «Արևմտյան Հայաստան. անցյալի հետքեր» թեման: Դասի ընթացքում երեխաներին ներկայացրինք Վանի բարբառով կատակներ, երգեր, արտահայտություններ, թևավոր խոսքեր: Աշակերտներն այնքան էին տպավորված, որ ցանկություն հայտնեցին երաժշտաթատերական ներկայացում բեմադրել: Միջոցառումը ներառում էր Վանի ազգային այնպիսի թանկարժեք գոհարներ, որոնք արդեն գտնվում են ոչնչացման եզրին: Պատմական հանգամանքների բերում Վանի բարբառախոս բնակչությունից բեկորներ են մնացել, իսկ նոր սերունդն այն մոռացության է մատնել:

Միջոցառումը հագեցած էր բազմաթիվ զրույցներով, ժողովրդական ասույթներով՝ օրհնանքներով, անեծքներով, հարսանեկան և մալուլոյ տաղերով: Աշակերտները մեծ ոգևորվածությամբ սերտեցին Վանի բարբառը և մեծ հաջողությամբ մարմնավորեցին իրենց վստահված կերպարները: Ծնողների, աշակերտների ջանքերի շնորհիվ ստեղծվեց փոքրիկ թանգարան, որը ներառում է Արևմտյան Հայաստանից բերված իրեր: Միջոցառումից դասարանում ստեղծվեց ջերմ մթնոլորտ, աշակերտները սկսեցին մտորել

այն հարցերի շուրջ, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս, ինչ ունեինք և ինչի տեր ենք հիմա։ Իսկ հանդիսատեսը կարծես մի պահ մտքով ճանապարհվեց մեր ապուպապերի երկիրը, հացաբույր շեներն ու քաղցրաշուրթ նախնիները։

Սույն աշխատանքի շրջանակներում մանրամասն կքննարկենք աշակերտների դաստիարակության և որպես անհատ ձևավորման խրթին գործում արտադասարանական միջոցառումների կազմակերպման կարևորությունն ու նշանակությունը և որպես օրինակ կներկայացնենք մեր կազմակերպած միջոցառման նպատակները, որոնք հանգում են հետևյալին.

1. Աշակերտների գիտակցության մեջ արմատավորել հայրենասիրություն, կորուսյալ հայրենիքի գիտակցումը։
2. Մոռացության մատնվելուց զերծ պահել ժողովրդական ասացվածքները, որպես մշակութային արժեք պահպանել հարսանեկան ծիսական սովորույթները, բանավոր զրույցները, որոնք նպաստում են գեղագիտական ճաշակի որակի զարգացմանը։

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ և ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. 1 Մանկավարժության օբյեկտը

Սույն թեմայի մասին խոսելիս տեղին է հիշել Կոմիտասի հետևյալ միտքը. «Եթե մանուկը չի հասկնար ձեր դաստիարակությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին. պետք է վար իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրացնել: Ուսուցիչ պարոննե՛ր և քույրե՛ր, զգուշությամբ ու երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը, դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է, սխալ ուղղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը»:

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով: Կարելի է ասել՝ գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները:

Մանկավարժության օբյեկտը կրթությունն է, որի միջոցով դպրոցականները տիրապետում են գիտությունների հիմունքներին, ձեռք բերում գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, և դրանց հիման վրա ձևավորում իրենց հայացքներն ու համոզմունքները, իդեալները, գիտական աշխարհայացքը, ստեղծագործական ընդունակությունները, բարոյական որակներն ու հասարակական վարքը:

Ա. Ս. Մակարենկոն քննադատում էր երեխային մանկավարժության օբյեկտ համարող մանկավարժներին: Նա մանկավարժական օբյեկտ էր համարում մանկավարժական փաստը՝ երևույթը, ընդ որում, նշում էր, որ երեխան դուրս չի մնում հետազոտողի ուշադրությունից, ընդհակառակը, մանկավարժությունը, լինելով մարդու մասին գիտություններից մեկը, ուսումնասիրում է անձի ձևավորման համար նպատակաուղղված գործունեությունը: Հետևապես, գրում է ակադեմիկոս Վ. Ա. Սլաստենինը, մանկավարժության օբյեկտը ոչ թե անհատն է, նրա հոգեկանը, այլ նրա հետ կապված մանկավարժական երևույթների համակարգը, դրա համար էլ, շարունակում է նա, որպես մանկավարժական օբյեկտ հանդես են գալիս իրականության

այն երևույթները, որոնք պայմանավորում են մարդ անհատի զարգացումը հասարակության նպատակաուղղված գործընթացում:[1]

Ինչպես բոլոր գիտությունները, մանկավարժությունը նույնպես ունի իր հասկացությունները: Դրանցից են ուսուցումը, կրթությունը, դաստիարակությունը, զարգացումը, ձևավորումը, ինքնակրթությունը, ինքնադաստիարակությունը, վերադաստիարակությունը և այլն: Մանկավարժությունը, ըստ Յու. Կ. Բաբանսկիի, գործառնում է մի շարք ուրիշ հասկացություններ, ինչպես օրինակ գիտելիք, կարողություն, հմտություն, հնար, միջոց, մեթոդ և այլն:[2]

Ի՞նչ է նշանակում լավ ուսուցիչ կամ լավ մանկավարժ: Լավ ուսուցիչը, ամենից առաջ, այն մարդն է, որը սիրում է երեխաներին, ուրախություն է ապրում նրանց հետ շփվելիս, հավատում է, որ յուրաքանչյուր երեխա կարող է դառնալ լավ մարդ, կարողանում է ընկերություն անել երեխաների հետ, սրտին մոտ է ընդունում մանկական ուրախությունն ու տխրությունը, ճանաչում է երեխայի հոգին՝ չմոռանալով, որ ինքն էլ ա երեխա եղել:

Լավ ուսուցիչը այն մարդն է, որը լավ տիրապետում է այն գիտությանը, որի վրա կառուցված է իր ավանդած առարկան, գիտի դրա հորիզոնները՝ նորագույն հայտնագործությունները, հետազոտությունները, նվաճումները: Դպրոցի պարծանքը դառնում է ուսուցիչը, որը, բացի վերոնշյալից, ինքը նույնպես անտարբեր չէ այն խնդիրների նկատմամբ, որոնց լուծման ուղղությամբ ջանքեր է գործադրում իր գիտությունը, օժտված է ինքնուրույն հետազոտություններ կատարելու ընդունակությամբ: Լավ ուսուցիչն անհամեմատ ավելի շատ գիտի, քան նախատեսում է դպրոցական ծրագիրը: Ուսումնական առարկան նրա համար միայն գիտության այբուբենն է: Խոր գիտելիքները, լայն մտահորիզոնը, հետաքրքրությունը դեպի գիտության պրոբլեմները ուսուցչին անհրաժեշտ են այն բանի համար, որ նա կարողանա աշակերտներին ցույց տալ գիտելիքների, առարկայի, գիտության, ուսուցման պրոցեսի ձգողական ուժը: Ուսուցչի մեջ աշակերտը պետք է տեսնի խելացի, գիտակ, մտածող, գիտությանը սիրահարված մարդու: Որքան ավելի խորն են ուսուցչի գիտելիքները,

[1] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Ատանյան, Մանկավարժություն, «Մանկավարժ» 2005, էջ 9
[2] Նշվ. աշխ., էջ 13

որքան ավելի լայն է նրա մտահորիզոնը, բազմակողմանի գիտական կրթվածությունը, այնքան նա ավելի մեծ չափով է ոչ միայն դասատու, այլև դաստիարակ։

Լավ ուսուցիչը գիտի նաև հոգեբանություն և մանկավարժություն, հասկանում և գիտակցում է. որ առանց դաստիարակության մասին գիտությանը տիրապետելու, անհնար է աշխատել երեխաների հետ։[3]

Ուսուցիչը լավ դասի համար պատրաստվում է ամբողջ կյանքի ընթացքում. . . Այդպիսին է մեր մասնագիտության և մեր աշխատանքի տեխնոլոգիայի հոգևոր ու փիլիսոփայական հիմքը. աշակերտներին գիտելիքների կայծ տալու համար ուսուցիչը պետք է իր մեջ կուտակի լույսի մի ամբողջ ծով։[4]

1. 2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունն ուղղված է ստեղծագործական ամբողջական անձի ձևավորմանը, ընդգրկելով նրա ինտելեկտուալ, հուզական, կամային, արժեքակողմնորոշիչ կողմերը։ Այն ներթափանցում է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները, թե՛ նրա մտածողության խորությունը, թե՛ զգացմունքների նրբությունը, թե՛ ընտրողության բնույթը, թե՛ դրույթները։ Գեղագիտական ուսուցումը տալիս է գեղագիտական գիտելիքներ։ Գեղագիտական դաստիարակությունը համընդգրկելի էև որոշում է ոչ միայն գիտելիքները, այլև մարդու բնավորությունը։ Գեղագիտական դաստիարակության պրոցեսումգեղագիտությունը ոչ թե պարզապես յուրացվում է մարդու կողմից որպես որոշակի գիտելիք,այլ դառնում է կարծես բուն իր մի մասը, քանի որ նրա անձը ձևավորվում է չորս բաղադրամասերի ամբողջական ներգործությամբ, այն է՝ գեղագիտական տեսության, բնական ու հասարակական կյանքի, արվեստի ստեղծագործությունների և սեփական գեղագիտական գործունեության, որն ընդգրկում է ինչպես այդ ներգործության առաջին երեք բաղադրամասերի ընկալումը, յուրացումը, այնպես էլ ստեղծագործությունը գեղեցկության օրենքներով։

Գեղագիտական դաստիարակվածությունը ենթադրում է անձի գեղագիտական համոզմունքների միասնությունը գործունեության բոլոր ոլորտներում նրա ինտուիտիվ

[3] Սուխոմլինսկին Վ. Ա., Դաստիարակության մասին, «Լույս» հրատարակչություն, Երևան 1976, էջ 131-132
[4] Սուխոմլինսկին Վ. Ա., նշվ. աշխ., էջ 134

կողմնորոշումների ու ինքնադրսևորումների հետ, իսկ դա պահանջում է ոչ միայն գեղագիտական կրթվածություն, այլև լուսավորվածություն, համոզվածություն, բնավորության հղկվածություն։ Գեղագիտական դաստիարակության առանձնահատուկ արժեքն այն է, որ այն նպաստում է անձի ինքնաճանաչմանն ու ինքնախորացմանը, որ այն մարդու՝ մարդկության հետ հաղորդակցվելու բարձրագույն ձևն է, մարդու սոցիալիզացման բարձրագույն ձևը։ Ուստի պատահական չէ Մ. Գորկու՝ «գեղագիտությունը ապագայի բարոյագիտությունն է» պատկերացումը։

Գեղագիտական դաստիարակության ուժեղ կողմը նրանում դիդակտիկայի բացակայությունն է։ Անձի վրա ներգործությունն ընթանում է անշահախնդիր, կամաց-կամաց, ոչ միտումնավոր։ Գեղագիտական դաստիարակության նպատակներն այնքան լայն են, որ բացակայում է ուղղակի օգուտը, բայց դրսևորվում է պրոցեսի լայն հասարակական իմաստավորությունը։ Եթե բարոյական դաստիարակությունը ենթադրում է տվյալ հասարակության ակտուալ սոցիալականհատկանիշներով մարդու ձևավորումը, ապա գեղագիտական դաստիարակությունը նկատի ունի ոչ միայն տվյալ հասարակությունը, այլ վերջին հաշվով ամբողջ մարդկությունը որպես անձի կենսագործունեության ոլորտ, կողմնորոշիչ և չափանիշ։ Գեղագիտական դաստիարակությունը զարգացնում է մարդու ստեղծագործական ընդունակությունները, սովորեցնում է նրան աշխարհին վերաբերվել իրոք մարդկայնորեն։ Այդ ամենի մեջ է գեղագիտական դաստիարակության թե՛ ակտուալության, թե՛ ոլորտի և նշանակության ապագա ընդլայնման աղբյուրը։[5]

Գեղագիտական դաստիարակությունը սրում է անմիջականորեն գիտակցության գեղագիտական բնագավառը. գեղագիտական ճաշակը, արժեքային կողմնորոշումները, իդեալները, դրույթները, չափանիշները, սակայն այն իր ներգործության ոլորտն է վերցնում նաև ամբողջ անձը։ Գեղագիտական դաստիարակության ցանկալի, լավագույն արդյունքն է ամբողջական ու ներդաշնակ, ինքնին և սոցիալապես արժեքավոր, ստեղծագործականորեն ակտիվ անձի ձևավորումը, որն ունի անհատական բարձր գեղագիտական կուլտուրա, ինչը թույլ է տալիս մարդուն ապրելու մարդասիրական

[5] Բորեվ Յու., Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982. էջ 487-488

կյանքով և գործելու համոզված, նպատակասլաց, ընտրողաբար, արդյունավետ, գործիմացաբար, համամարդկայնորեն իմաստավոր կերպով։ Անձի գեղագիտական դաստիարակվածության միակ ցուցանիշը նրա ինքնուրույն անձնական գործողություններն են՝ դրանց մարդասիրական բնույթը, վարքագծի ազնիվ տիպը, շարժուձևերն ու արտաքին տեսքը, որոնք համապատասխանում են բարձր ճաշակին։[6]

[6] Բորեվ Յու. , նշվ. աշխ , էջ 489

ԳԼՈՒԽ 2. ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ և ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ «ՎԱՆԵՑՈՑ ՀԱՐՍԱՆԻՔ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Դպրոցում դաստիարակչական գործընթացի մշակույթը շատ կողմերով որոշվում է այն բանով, թե դպրոցական կյանքը որքանով է հագեցած երաժշտական ոգով: Երաժշտությունը բարուն, գեղեցիկին, մարդկայինին հաղորդակից դարձնելու ամենահրաշագործ, ամենանուրբ միջոցն է: Երաժշտություն լսելով մարդը ճանաչում է իրեն և ճանաչում է, ամեն առաջ, այն, որ ինքը՝ մարդը, գեղեցիկ է, ծնված է այն բանի համար, որ լինի գեղեցիկ, և եթե իր մեջ կա որևէ վատ բան, ապա պետք է հաղթահարի այդ վատը, իր մեջ եղած վատը զգալուն էլ հենց օգնու է երաժշտությունը:

Երաժշտության շնորհիվ մարդու մեջ արթնանում է վսեմի, վեհասքանչի, գեղեցիկի պատկերացումը ոչ միայն մեզ շրջապատող աշխարհում, այլև հենց իր մեջ: Երաժշտությունն ինքնադաստիարակման հզոր միջոց է:

Երեխաների դաստիարակության կարևոր խնդիրներից մեկը այն է, որ երաժշտական ստեղծագործությունների ընկալմանը հաջորդեր այն ֆոնի ընկալումը, որի շնորհիվ մարդը կարող է հասկանալ, զգալ երաժշտության գեղեցկությունը:[7]

Երաժշտական դաստիարակությունը ոչ թե երաժիշտ դաստիարակելն է, այլ, ամենից առաջ, մարդու դաստիարակությունը:

Ունկնդրման համար հարկ է ընտրել այնպիսի մեղեդիներ, որոնցում երեխաներին հասկանալի պատկերներով հաղորդվում է այն, ինչը նրանք լսում են իրենց շուրջը. թռչունների ծլվլոցը, տերևների սոսափյունը, ամպրոպի որոտալը, գետակների խոխոջյունը և այլն: Պետք է միաժամանակ երեխաներին պաշտպանել տպավորությունների առատությունից:

Երաժշտությունը մտքի հզոր աղբյուր է: Առանց երաժշտական դաստիարակության անհնարին է երեխայի լիարժեք մտավոր զարգացումը: Երաժշտության սկզբնաղբյուր է ոչ միայն մեզ շրջապատող աշխարհը, այլև հենց ինքը՝ մարդը, նրա հոգևոր աշխարհը, մտածողությունը և խոսքը:

---

[7] Սուխոմլինսկին Վ. Ա., նշվ. աշխ., էջ 212-213

Երաժշտությունն այն ամենաբարենպաստ ֆոնն է, որի ներքո ստեղծվում է դաստիարակի ու երեխաների հոգևոր ընդհանրությունը: Երաժշտությունն ասես բաց է անում մարկանց սրտերը: Լսելով սքանչելի մեղեդի, դյութվելով ու հիանալով նրա գեղեցկությամբ, ուսուցիչը և աշակերտը ավելի են մտերմանում, հարազատանում:[8]

Ժամանակակից դպրոցներում գերագնահատվում է ուսումնական գործընթացը՝ ետին պլան մղելով արտադասարանական միջոցառումները: Ուսումնական գործընթացին զուգահեռ պետք է նաև կազմակերպվեն արտադպրոցական միջոցառումներ՝ բազմաբնույթ ձևերով (ցերեկույթներ, միջդասարանային միջոցառումներ տարբեր առարկաների կամ թեմաների իմացության շուրջ, էքսկուրսիաներ, տիկնիկային թատրոն, այց պատկերասրահ, սպորտ-միջոցառումներ, շաբաթօրյակներ, բեմականացումներ, գրական-ստեղծագործական քննարկումներ):[9] Աշակերտը ցանկանում է որևէ գործունեության մեջ աչքի ընկնել, Սակայն ոչ միշտ է, որ կարողանում է լիարժեք ճանաչել իր հնարավորություններն ու ունակությունները, լինել համարձակ՝ հասարակության մեջ իրեն կատարյալ դրսևորելու համար: Ուստի, ինչպես նշել է մեծ մանկավարժ Սուխոմլինսկին. «Չի կարելի փոքրիկ մարդու հոգեկան աշխարհը հանգեցնել միայն ուսման: Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի հոգու բոլոր ուժերը կլանվեն դասերով, կյանքը նրա համար կդառնա անտանելի: Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ յուր բազմակողմանի հետաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով»: Անշուշտ մեծ է միջոցառումների դերը, որոնք կարող են սեր և ձգտում առաջացնել դեպի ուսումնական գործընթացը: Աշակերտն այդ միջոցառումներից պետք է բավարարված և ինքնագոհ լինի, այն է՝ միջոցառումը պետք է համապատասխանի աշակերտի զգացմունքներին, ապրումներին: Միջոցառումները դառնան դպրոցականի բազմակողմանի զարգացման ու դաստիարակության միջոց, աշակերտը լինի միջոցառման առաջատարն ու պատասխանատուն: Որպեսզի աշակերտն ապագայում իրեն զգա պետության քաղաքացի, դեռ դպրոցական տարիներից նրա մեջ պետք է ձևավորել

[8] Նշվ. աշխ էջ 214-217

[9] Մանկարյան Ա., Արտադասարանական միջոցառումների դերը աշակերտների ինքնադրսևորման գործում, https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/makaryanalvard.pdf , էջ 522

ինքնուրույնություն և նախաձեռնելու կարողություն, որոնց կնպաստեն նաև արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները: Իսկ վերջիններս կձևավորվեն արտադասարանական միջոցառումների ժամանակ: Անհրաժեշտ է համապատասխան միջավայր ստեղծել աշակերտների հետաքրքրությունների ձևավորման և ինքնադրսևորման համար: Արտադասարանական միջոցառումները այն կարևոր ազդակներն են, որոնք նպաստում են աշակերտների ազատ, անկաշկանդ կամարտահայտմանը: Ուստի տվյալ առարկան դասավանդող ուսուցչի և դասղեկի նպատակը պետք է լինի նաև արտադասարանական միջոցառումներին աշակերտներին նպատակամղել ստեղծագործական գործունեության: Վերջիններս պետք է նպաստեն աշակերտների ինքնադրսևորմանն ու ինքնաիրացմանը, սոցիումի որդեգրմանը, սոցիումին անդամագրմանը: Աշակերտների համար արտադասարանական միջոցառումները լինելու են ցանկալի և սպասված: [10] Որպես օրինակ ներկայացնենք 7-րդ դասարանի աշակերտների մտորումները «Վանեցոց հարսանիք» արտադասարանական միջոցառման մասին. «Մենք երջանիկ ենք, որ ունեցանք այսչափ հետաքրքիր միջոցառում. . . վստահ չէինք, որ կկարողանանք կերպարները ներկայացնել», «. . . սիրեցինք Վանի բարբառը, սիրում և կարոտում ենք մեր կորուսյալ հայրենիքը, չենք կորցնում այն վերադարձնելու հույսը»: Կարծես այս շարադրանքը սթափեցնող կոչ է, որպեսզի միջոցառումներ կազմակերպելիս հաշվի առնենք աշակերտների նպատակներն ու ցանկությունները, նրանց դիտարկենք իբրև ձևավորված անձ և հնարավորություն տանք ինքնադրսևորվելու որպես գործընկեր ու հարգենք վերջիններիս «ես»-ը:

Այսպիսով՝ պարզվեց, որ հաճախակի կատարվող արտադասարանական միջոցառումներն շատ են օգնում աշակերտներին ինքնաարտահայտման, ինքնադրսևորման հարցերում, եթե վերջիններս անմիջապես մասնակցում են տվյալ միջոցառման և՛ թեմատիկայի ընտրությանը, և՛ միջոցառման անցկացմանը, իսկ ուսուցիչները ընդամենը ուղղորդում են նրանց և արդյունքում ավելի լիարժեք են ճանաչում իրենց սաներին: Քանի որ մանկավարժական գործընթացի կարևոր

[10] Նշվ. աշխ , էջ 521

բաղադրամաս են կազմում նաև արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները (ապացույցը՝ մեր հարցումներն ու միջոցառումներն էին), որոնց իրականացնողները պետք է աշակերտները լինեն, ուստի ժամանակահունչ և հրատապ է առաջնորդվել վերջիններիս պահանջներով, այն է նրանց միջոցով ու օգնությամբ կազմակերպենք բազմաբնույթ թեմաներով միջոցառումներ՝ հնարավորություն ստեղծելով, որ զարգանա աշակերտների ինքնուրույնությունը, որոնց շնորհիվ կլուծվի նաև ինքնիրացման խնդիրը, իսկ ուսումնական գործընթացը աշակերտների համար կդառնա ավելի բովանդակալից ու հետաքրքիր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած միջոցառում ունի նպատակ, խնդիրներ, ընթացք և ավարտ։ Որքանով են այս պահանջները պահպանվում միջոցառման ժամանակ։ Որքանով է թեմատիկան բխում աշակերտների հոգուց, ինչ նպատակներ են հետապնդում նման միջոցառումները, ինչ են սովորում և ինչ վերհիշում աշակերտները ելնելով միջոցառման խորագրից։ Այս հարցերին լիարժեքորեն պատասխանելու և պահանջներին համապատասխանելու դեպքում է մանկավարժը կամ միջոցառումների կազմակերպիչը հասնում առավելագույն արդյունքի։

Ցանկացած զարգացած հասարակության պահանջն է ոչ միայն հարուստ գիտելիքներով օժտված սերունդ ունենալ, այլ նաև դաստիարակված։ Վերոշարադրյալից կարող ենք եզրականել, որ հաճախակի կազմակերպվող արտադասարանական միջոցառումները շատ են օգնում աշակերտներին ինքնարտահայտման, ինքնադրսևորման հարցերում։ Քանի որ մանկավարժական գործընթացի կարևոր բաղադրամաս են կազմում արտադասարանական բազմաբնույթ միջոցառումները,ուստի խիստ կարևոր է հաշվի առնել աշակերտների պահանջները՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով աշակերտների ինքնուրույնության զարգացման համար, ինչը կնպաստի ուսումնական գործընթացի առավել հետաքրքիր դառնալուն։

ՀԱՎԵԼՎԱԾ 1։ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ՀՆՉԱԾ «ԹԱՔԱՎՐՈՒ ՄԷՐ, ՏԻՒՍ ԱՐԵ» ՀԱՐՍԱՆԵԿԱՆ-ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԻ ԲԱՌԵՐԸ

Թաք ավրու մէր, տյիւս արե,

Քյո կլյոխ դմփող եմ պիրե. . .

Թաքավրու մէր, տիւս արե,

Սարի կաքյավ ենք պիրե,

Սարի մարալ ենք պիրե,

Խօրօտ ջէյրան ենքյ պիրե։

Թաքավրու մէր, տիւս արե. . .

Լվաց անօղ ենքյ պիրե։

Թաքավրու մէր, տիւս արե,

. . . Աման լվացօղ ենքյ պիրե։

Թաքավրու մէր, տիւս արե

Թօնէր վառօղ ենքյ պիրե։

Խմոր կեօղ ենքյ պիրե։

Խմօր շաղաղօղ ենքյ պիրե,

Կյռտնակ արօղ ենքյ պիրե,

Քյե խաց թխօղ ենքյ պիրե։

Թաքավրու մէր, տիւս արե,

Տախտ ավիլօղ ենքյ պիրե,

Լեզուն տաս գյազ ենքյ սլիրե։

Թաքավրու մէր, տիւս արե,

. . . Քյո կլյոխ դրմփօղ ենքյ պիրե։[11]

[11] Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյութեր և ուսումնասիրություններ, Հայ կվլան ԱԷ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1970, էջ 170

ՀԱՎԵԼՎԱԾ 2: ԴՐՎԱԳՆԵՐ «ՎԱՆԵՑՈՑ ՀԱՐՍԱՆԻՔ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄԻՑ

Օգտագործված գրականության ցանկ

1. Բորեվ Յու. , Գեղագիտություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1982.
2. Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյութեր և ուսումնասիրություններ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1970
3. Մակարյան Ա. , Արտադասարանական միջոցառումների դերը աշակերտների ինքնադրսևորման գործում, https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/makaryanalvard.pdf
4. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, «Մանկավարժ» 2005
5. Սուխոմլինսկին Վ. Ա. , Դաստիարակության մասին, «Լույս» հրատարակչություն, Երևան 1976